05.05.26 - 07.05.26
09:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճ, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 219, 320 և 323 լսարաններ

Ս. թ. մայիսի 5-ին՝ ժամը 9:00-ին, ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում
Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի նախաձեռնությամբ կմեկնարկի «Հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդի հիմնախնդիրները փոփոխվող կլիմայի պայմաններում. հարմարվողականություն, կայունություն և արտադրական գործընթաց» խորագրով միջազգային եռօրյա գիտաժողովը:

Գիտաժողովի պլենար նիստը տեղի կունենա ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում, իսկ սեկցիաները՝ ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 219, 320 և 323 լսարաններում:

Գիտական զեկույցներ կներկայացնեն Հայաստանի, Իսպանիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Բելառուսի, Իրանի, Նիգերիայի և Հնդկաստանի գիտնականները (ակադեմիկոսներ, դոկտորներ, պրոֆեսորներ, ավագ ու կրտսեր գիտաշխատողներ, ասպիրանտներ, ուսանողներ)։

Ներկա կլինեն ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ԵՊՀ պրոռեկտորները, ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Սարգիս Քելյանն ու ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական համակազմը, ինչպես նաև գիտական հանրույթի ներկայացուցիչներ։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am